Ասպիրանտուրայի հարգելի՛ դիմորդներ,

Համաձայն ՀՀ Կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին տեղեկատվության, ասպիրանտուրա ընդունելության համար անհրաժեշտ պահանջ է հանդիսանում միայն օտար լեզվի (անգլերեն լեզու՝ «TOEFL ibt», «IELTS», ֆրանսերեն լեզու՝ «TCF», գերմաներեն լեզու՝ «on DAF» /«On SET»/) ատեստավորման վկայականի կամ դրան համապատասխան տեղեկանքի առկայությունը:

Բացի դա, անհրաժեշտ փաստաթղթերում պետք է ներառված լինի նաև, դիմորդի կողմից, որոշակի ծավալով գիտական հետազոտություն՝ գիտական ռեֆերատի տեսքով: Այն պետք է պարունակի գիտական ռեֆերատին բավարարող պահանջները (ռեֆերատին ներկայացվող պահանջները մանրամասնորեն կարող եք գտնել ՀՊՏՀ ասպիրանտուրայի կայքում): Գիտական ռեֆերատի պահանջը չի գործում, եթե դիմորդը ներկայացնում է ընտրված մասնագիտությամբ որևէ գիտական ամսագրում (ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերական) հրատարակված առնվազն մեկ գիտական հոդված:

Համաձայն 2016 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի» մասին որոշման մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը: Բանավոր քննությունը ձայնագրվում է, և արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ:

Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր:

Մասնագիտական քննության արդյունքներից դժգոհ դիմորդը կարող է բողոքարկել մասնագիտական քննության գնահատականը՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ ժամվա ընթացքում, հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը:

Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ

մեծամասնությամբ, կայացվում է որոշում գնահատականը անփոփոխ թողնելու կամ գնահատականը բարձրացնելու վերաբերյալ:

Գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:

Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:

Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա տվյալ հաստատության ընդունելության քննության ընթացքում:

Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:

Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝

1. մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ընդհանուր միջին որակական գնահատականը,
2. բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը,
3. հրատարակված գիտական աշխատանքների թիվը,
4. միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):

Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա ընդունում է որոշում յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ:

Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում: